ՆՈՐԱՀԱՅՏ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐ ՆԵՂՈՒՑ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ԱՎԵՏՅԱՆ Վ. Վ.

Հայաստանի Հանրապետության տարածքից հայտնաբերվել են հազարավոր ժայռապատկերներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. VI-I հազարամյակներով: Դրանք ոճական իմաստով տեղական միջավայրի նյութական մշակույթի օրինաչափ զարգացման դրսևորումներ են՝ բնա-էկոլոգիական միջավայրի արգասիքներ:

Հատկապես մեծ թիվ են կազմում Գեղամա, Վարդենիսի[1], Սյունիքի լեռների Ուղտասար լեռան[2] և Արագածոտնի[3] ժայռապատկերները, որոնք հիմնականում ընդօրինակվել և նախնական ուսումնասիրության են ենթարկվել Հ. Մարտիրոսյանի, Հ. Իսրայելյանի, Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի, ինչպես նաև Ս. Սարդարյանի և այլոց կողմից: Հարկ է նշել, որ այդ գործին վերջերս ձեռնամուխ է եղել Կ. Թոխատյանը, որը ժայռապատկերների վերծանման գործում ցուցաբերում է ուրույն մոտեցում՝ կարևորելով լուսանկարումն ու դասակարգումը:

Ժայռապատկերների առանձին խմբեր են հայտնի Մեծամորից[4], Սևանա լեռների հարավարևելյան վերջավորությունից՝ Քարվաճառի տարածքից[5] և այլ վայրերից: Վերջին շրջանում հանրահայտ ժայռապատկերների շարքին ավելացան Լոռու մարզի Նեղուց գյուղի և Տավուշի մարզի Գոշ գյուղի տարածքից 1880-1890-ական թվականներին մեր հայտնաբերածները:

Ներկայացնենք Նեղուց գյուղից հայտնաբերված ժայռապատկերները:

Նեղուց գյուղը գտնվում է նախկին Թումանյանի շրջանում՝ Ախթալա երկաթուղային կայարանից 1,5 կմ արևմուտք, Դեբեդ գետի աջափնյակում ընկած նեղ ձորակում: Գյուղի տարածքն ամբողջովին պատված է ժայռաբեկորներով ու քարակարկառներով, որոնք գոյացել են հազարամյակների ընթացքում տեղի ունեցած երկրաբանական փոփոխությունների, հողմնահարումների և երկրաշարժերի հետևանքով, ինչպես նաև հարավակողմյան ժայռոտ բարձունքներից գլորված զանգվածեղ և միջին մեծության քարերի կուտակումներից:

Որոշ քանակությամբ ժայռապատկերներ անկանոն փռված են գյուղի ամբողջ տարածքով՝ տեղահան եղած մեծ ու փոքր քարերի վրա, որոնց մի զգալի մասը հասել է մինչև Դեբեդ գետը: Հետևապես, մեր հայտնաբերածներն ամբողջի չնչին մասն են կազմում, մանավանդ որ կան ահռելի մեծությամբ շրջված քարեր, որոնց տակի կողմում առկա են ժայռապատկերներ:

---

[1] **Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ.**, Գեղամա լեռների ժայռապատկերները, Ե., 1971:

[2] **Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ.,** Սյունիքի ժայռապատկերները, Ե., 1970:

[3] Ս**արդարյան Ս.Հ.,** Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1964:

[4] **Խանզադյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս.,** Մեծամոր, Ե., 1973:

[5] Նյութերը չեն հրապարակվել, իսկ մեզ մոտ կան առանձին նմուշներ:

Գյուղը փռված է ձորակի աջ և ձախ եզրերին, իսկ արևմտյան վերջավորությունն ավարտվում է մի ընդարձակ, բարձր, հարթ հրվանդանով, որին տեղացիներն անվանում են Փոքր տափ։ Հրվանդանի տարածքում, հատկապես ստորոտում, առանձին ժայռաբեկորների վրա ևս կան ժայռապատկերներ։

Այդ տարածքներից ժայռապատկերներ ենք հայտնաբերել 1987- 2000 թթ.։

Գյուղի արևմտակողմի ժայռապատկերներից մեկի խմբանկար-կտավում պատկերված են կանգնած և նստած այծերի, արջամկան, իսկ դրանց կենտրոնում՝ մարդ խորհրդանշող պատկեր (նկ. 1)։ Վերջինս հաճախ է հանդիպում Գեղամա և Սյունիքի լեռների ժայռապատկերներում։



Նկ. 1

Նույն տարածքի մյուս ժայռապատկերներում ճառագայթող մեծադիր արևի և համապատասխանաբար փոքր կիսալուսնի նկարներ են (նկ. 2)։ Դատելով դրանց ծավալային համեմատություններից՝ կարելի է կարծել, որ դրվագող վարպետը երկնային մարմինների նկատմամբ ունեցել է ռեալիստական պատկերացումներ։



Նկ. 2

Երրորդ ժայռապատկերում աղեղնավոր է (նկ. 3)։ Այս նկարը հյուսածո հորինվածք է, փորագրաձև, որը կարելի է դրվագել մետաղե գործիքի միջոցով, որպիսիք Նեղուցի ժայռապատկերներում եզակի չեն։



Նկ. 3

Չորրորդ ժայռապատկերը խմբանկար-կտավ է, որում հստակ նկատելի է օձերով շրջապատված այծ։ Կարելի է ենթադրել՝ մայր այծը վտանգի ենթարկված ուլին պաշտպանության տակ է առել և պատրաստ է հարձակվելու վիշապօձի վրա կամ գուցե արդեն սպանել է օձին, որը գլխով հակառակ ուղղությամբ փռված է գետնին։ Իսկ օձերից մեկն էլ, իր զոհին թողած, շտապում է այծի կողմը։ Այս խմբանկարում կան այլ պատկերներ, որոնք դարձյալ օձեր են հիշեցնում[6] (նկ. 4)։

Նկ. 4

Գյուղի արևելյան կողմում՝ մի քարի վրա, պատկերված է երկար կոտոշներով այծ՝ հանգիստ կանգնած դիրքով (նկ. 5)։

[6] Հետաքրքիրն այն է, որ այժմ էլ Նեղուցի տարածքն օձաշատ է։



Նկ. 5

Մեկ այլ քարի վրա միմյանցից հակառակ ուղղությամբ կանգնած երկու այծեր են, որոնցից աջակողմյանն անսովոր երկար կոտոշով է (նկ. 6)։



Նկ. 6

Մյուս քարի վրա, թերևս, մողես է (նկ. 7)։



Նկ. 7

Պատկերված է գայլ կամ աղվես՝ ընթացքի ժամանակ (նկ. 8)։



Նկ. 8

Ստորև մարդու պատկեր է. ձեռքերը վեր բարձրացրած և տղամարդու ընդգծված հատկանիշով: Պատկերը շրջուն վիճակում է (գուցե ժամանակի ընթացքում պատկերը կրող քարն է շրջվել): Մենք նկարել ենք այնպես, ինչպես կա (նկ. 9):



Նկ. 9

Ներքևի քարի նկարը նմանվում է շան, որին կարծես հետապնդում են երկու օձեր (նկ. 10):

Նկ. 10

Քարին պատկերված է հեռացող արջ, որի հետևում խառնիխուռն ընկած են գալարվող օձեր կամ զոհ դարձած կենդանիների մարմիններ (նկ. 11):

Նկ. 11

Մյուս քարի ժայռապատկերներն անորոշ են։ Քարի պատկերներ կրող երեսը խիստ հողմնահարված է։ Նկատվածները նման են թռչունների (նկ. 12)։

Նկ. 12

Այս քարի վրայի պատկերները նույնպես եղծված են։ Նկատվածները նման են ճախրող թռչունների (նկ. 13)։



Նկ. 13

Տեղացիների վկայությամբ տարիներ առաջ եղել են եղջերուների պատկերներ կրող քարեր, որոնք 1988 թ. երկրաշարժի հետևանքով տեղահան են եղել ու չեն երևում: Դա ստույգ է, քանի որ 1987 թ. ամռանը Փոքր տափ կոչվող հրվանդանի ստորոտում ինքս նույնպես նկատել եմ ձեռքերը վեր բարձրացրած և մատերը չռած մարդու, այծի և սվաստիկաձև խաչի պատկերներ, որոնք այժմ տեղահան լինելու հետևանքով անհետացել են:

Ավելացնենք, որ Նեղուցի տարածքում մենք ընդամենը հետախուզական բնույթի դիտումներ ենք կատարել, և տեղանքը հնագիտական լուրջ ուսումնասիրությունների կարիք ունի: Այստեղից հայտնաբերված ժայռապատկերների թվագրումը մնում է բաց: Այդ տարածքում առկա են մ.թ.ա. II հազարամյակի կեսերին բնորոշ խեցեղենի բեկորներ:

НОВОВЫЯВЛЕННЫЕ НАСКАЛЬНЫЕ ИЗОБРАЖЕНИЯ НА ТЕРРИТОРИИ СЕЛЕНИЯ НЕГУЦ

АВЕТЯН В. В.

Резюме

В области Лори на территории села Негуц, расположенного в полутора километрах к западу от железнодорожной станции Ахтала, нами были обнаружены наскальные изображения, на которых представлены человеческие фигуры, животные, а также небесные тела и свастика. В общих чертах они схожи с другими наскальными изображениями, обнаруженными ранее на территории Армении.

К сожалению, во время Спитакского землетрясения 1988 года значительная часть наскальных рисунков была повреждена или утеряна в результате смещения каменных глыб.